ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՎՌԱՄ ՎԼԱԴԻՄԻՐԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵԱՏՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Ը.00.06 - «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր

ԵՐԵՎԱՆ - 2022

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդում

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Զոյա Աղվանի Թադևոսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Դավիթ Ներսիկի Հախվերդյան

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Միսակ Արմոյի Ավագյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2022 թ. նոյեմբերի 10-ին, ժամը 14^{00}-ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի տնտեսագիտության 014 մասնագիտական խորհրդում:

Հասցե՝ 0025, ք.Երևան, Մ. Նալբանդյան 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022 թվականի սեպտեմբերի 30-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Տ.Ս. Մարտիրոսյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: 21-րդ դարի սկզբին տեղ գտած գիտական հայտնագործությունները իրենց ազդեցությունը թողեցին նաև միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգաստեղծ տարրերի վրա: Համաշխարհային շուկայում մրցակցության սրումը և ռեսուրսային բազայի սահմանափակությունը ստիպեցին երկրներին փնտրել առաջանցիկ աճի օպտիմալ ուղիներ՝ նորարարական տեխնոլոգիաների հիման վրա, այդպիսով որոշակիացնելով համաշխարհային տնտեսական համակարգի զարգացման երկարաժամկետ միտումները: Գիտատեխնիկական զարգացման նոր փուլը բնութագրվում է ֆունդամենտալ փոփոխություններով, ինչը իր արտացոլումը գտավ հատկապես անցումային տնտեսություն ունեցող երկրների տարածաշրջանային ինտեգրման խմբավորումների ձևավորման մեջ:

Անցումային տնտեսություն ունեցող երկրները տնտեսական համակարգերի ձևավորման և սոցալ-տնտեսական հարաբերությունների որակական վերափոխումների ժամանակ բախվում են հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման դժվարություններին: Տարածաշրջանի մասշտաբով տնտեսական գործունեության ինտեգրմանը զուգահեռ, աշխատանքի տարածաշրջանային բաժանման և մասնագիտացման գործընթացները ստանում են կարևոր նշանակություն: Սա պայմանավորված է առանձին երկրների՝ աշխատանքի տարածաշրջանային բաժանման գործընթացներում ուրույն դեր ստանձնելու հրամայականով:

Աշխատանքի միջազգային բաժանումը սերտ կապված է նաև արտադրության կոոպերացման հետ: Արտադրության կոոպերացումը կարելի է բնութագրել որպես աշխատանքի միջազգային բաժանման վրա հիմնված գործընթաց, որը հանգեցնում է երկրների միջև առավել բարձր մրցունակություն ունեցող ապրանքների փոխանակմանը: Սակայն, համաշխարհային տնտեսության գլոբալացման և տարածաշրջայնացման արդի փուլում չարժե արտադրության կոոպերացիան դիտարկել միայն արտադրությունների բաշխման տեսանկյունից: Արտադրության ֆրագմենտացիան և վերջնական արտադրանքի տարբեր մասերի արտադրության բաժանումը առանձին երկրների միջև, հանգեցնում են բարդ և «առանց սահմանների» արտադրական համակարգերի ձևավորմանը (գլոբալ արժեքային շղթաներ), որոնցում առանձին երկրները և ձեռնարկությունները միավորված են երկարաժամկետ տնտեսական աճի բարդ սցենարների մեջ:

Եվրասիական տարածաշրջանում ինտեգրացիոն գործընթացների զարգացումը սիներգիկ էֆեկտ ապահովելու նպատակ ունի, որը պետք է հիմնվի ինտեգրացիոն խմբավորման երկրների մրցակցային առավելությունների ավելի համակարգային օգտագործման և տարածաշրջանային արժեքային շղթաների ձևավորման վրա, ինչն էլ աշխատուժի և կապիտալի խաչաձև օգտագործման միջոցով թույլ կտա ապահովել երկարաժամկետ տնտեսական աճ: Այս առումով, Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) երկրների՝ աշխատանքի տարածաշրջանային բաժանման մեջ ունեցած տեղի ու դերի բացահայտմանը և դրանց

մրցակցային ներուժի լրիվ օգտագործման նոր մոտեցումների առաջադրմանը նվիրված սույն ատենախոսության թեման կարելի է համարել արդիական:

Հետազոտության թեմայի ուսումնասիրվածության աստիճանը: Աշխատանքի բաժանման խնդիրը դեռևս դարեր առաջ եղել է գիտնականների ուշադրության կենտրոնում: Դրանով զբաղվել են հայտնի տնտեսագետներ Վ. Պետտին, Ա. Սմիթը, Դ. Ռիկարդոն: Աշխատանքի տարածքային բաժանման տեսության մեջ մեծ ներդրում են ունեցել նաև Է. Հեքշերը և Բ. Օհլինը՝ առաջ քաշելով «Արտադրության գործոնների հարաբերակցության տեսությունը»: Աշխատանքի տարածաշրջանային բաժանման առավել հատկանշական աշխատություններից կարելի է առանձնացնել Ու. Իզարդի, Հ. Բոսի, Պ. Դիկենի, Պ. Կրուգմանի, Մ. Պորտերի, Վ. Լլոյդի և այլոց աշխատությունները:

Աշխատանքի տարածաշրջանային բաժանման և արտադրության բաշխման տեսական հիմնադրույթները, արդի ժամանակաշրջանում, զարգացնում են նաև հայրենական տնտեսագիտական գրականության մեջ, հատկապես պրոֆեսորներ Հ. Բագրատյանը, Զ. Թադևոսյանը, Ա. Դարբինյանը, Ա. Մարկոսյանը, Թ. Մանասերյանը, Դ. Գալոյանը, Դ. Հախվերդյանը, Ա. Թավադյանը և այլոք:

Այնուամենայնիվ, աշխատանքի տարածաշրջանային բաժանման, որպես ԵԱՏՄ երկրների տնտեսական աճի ապահովման կարևորագույն գործոնի, ինչպես նաև տարածաշրջանային արտադրական կոոպերացման սկզբունքների և օրինաչափությունների ուսումնասիրությունն ունի ավելի համակարգային մոտեցման կարիք: Այս խնդիրների ուսումնասիրությունը արժեքավոր է այն տեսանկյունից, որ ստացված արդյունքները կարող են օգտագործվել ԵԱՏՄ երկրների արդյունաբերական քաղաքականությունների մշակման ժամանակ:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակը աշխատանքի տարածաշրջանային բաժանման նախադրյալների և օրինաչափությունների ուսումնասիրության միջոցով ԵԱՏՄ երկրների երկարաժամկետ տնտեսական աճի և մրցունակության վրա արտադրության մասնագիտացման և կոոպերացման ազդեցության բացահայտումն է: Նշված նպատակի իրացման գործնական քայլերի մատնանշման նկատառումներով՝ ատենախոսության շրջանակներում քննարկվել են հետևյալ խնդիրները.

- բացահայտել և նկարագրել այն պայմանները, որոնց շրջանակներում ընթանում է աշխատանքի տարածաշրջանային բաժանման գործընթացը և որոնք ազդեցություն են թողնում երկրների տնտեսական աճի վրա,
- ուսումնասիրել տարբեր ինտեգրացիոն միավորումների շրջանակներում աշխատանքի տարածաշրջանային բաժանման և մասնագիտացման օգուտների իրացման տեսական հայեցակարգերը,
- վերհանել աշխատանքի տարածաշրջանային բաժանման գործնական հիմնախնդիրները և ԵԱՏՄ անդամ երկրների արտահանման և ներմուծման համակենտրոնացման/դիվերսիֆիկացման ինդեքսների վերլուծության հիման վրա բացահայտել այդ երկրների արտադրական մասնագիտացման ոլորտները և արտադրական կոոպերացման հնարավորությունները,

- ԵԱՏՄ անդամ երկրների արտաքին առևտրային հոսքերի որակական և քանակական բնութագրիչների ուսումնասիրության հիման վրա, բացահայտել դրանց ազեցությունը ինտեգրացիոն խմբավորման տնտեսական և արդյունաբերական զարգացման վրա,
- տնտեսամաթեմատիկական մոդելի կառուցման միջոցով գնահատել ԵԱՏՄ երկրների միջև արտադրության կոոպերացման և տարածաշրջանային արժեքային շղթաների ձևավորման հնարավորությունները, ինչպես նաև բացահայտել միասնական արդյունաբերական քաղաքականության արդյունավետությունը:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության *օբյեկտը* ԵԱՏՄ երկրների աշխատանքի տարածաշրջանային բաժանման գործընթացն է և դրա ազդեցությունը երկրների տնտեսական աճի վրա, իսկ *առարկան*՝ աշխատանքի տարածաշրջանային բաժանման և երկրների միջև արտադրական կոոպերացման պատճառահետևանքային կապերն են՝ ինտեգրացիոն խմբավորման անդամ երկրների տնտեսական աճի տեմպերի բարձրացման տեսանկյունից:

Ուսումնասիրության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը: Ատենախոսության մեջ առաջադրված խնդիրների լուծման համար տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել արտասահմանյան և հայրենական ժամանակակից հետազոտություններում աշխատանքի միջազգային և տարածաշրջանային բաժանման տնտեսական հիմնադրույթները լուսաբանող գիտական հրապարակումները:

Հետազոտության ընթացքում, համակարգային մոտեցման շրջանակներում, կիրառվել են ընդհանուր գիտական հետազոտության մեթոդներ. պատմականի ու տրամաբանականի համակցում, տեսական և մաթեմատիկական մոդելավորում, վիճակագրական ու գործոնային վերլուծություն, գրաֆիկական մոդելավորում և այլն: Մեթոդական վերլուծության համար կիրառվել է նաև VAR-Vector AutoRegression մոդելը:

Ատենախոսության գործնական նշանակությունը հիմնավորելու նպատակով օգտագործվել են ԵԱՏՄ անդամ երկրների վիճակագրական ծառայությունների պաշտոնական հրապարակումները, Միջազգային առևտրի կենտրոնի, UNCTAD-ի, Երասիական տնտեսական հանձնաժողովի և այլ միջազգային կառույցների հրապարակված վիճակագրական տվյալները, տեղեկագրերը, զեկույցները, փորձագիտական գնահատականները:

Ատենախոսության գիտական նորույթը: Հետազոտության ընթացքում ստացվել են տեսական, մեթոդական և գործնական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից գիտական նորույթ կարելի է համարել հետևյալները.

- Ինտեգրացիոն խմբավորման անդամ երկրները դասակարգվել են ըստ աշխատանքի տարածաշրջանային բաժանման և մասնագիտացման գործընթացներում՝ արտադրության արդյունավետության բարձրացման և խմբավորման տնտեսական աճի վրա իրենց բնաշխարհագրական առանձնահատկությունների և ռեսուրսապահովվածության ազդեցության տեսանկյունից:

- Միջազգային տնտեսագիտությունում կիրառվող՝ աշխատանքի միջազգային բաժանման գործընթացներում առանձին երկրների մասնագիտացման մակարդակը գնահատող ցուցանիշների ընդհանրացման հիման վրա մշակվել է աշխատանքի տարածաշրջանային ճյուղային բաժանման գործակից, որը թույլ է տալիս գնահատել ինտեգրացիոն խմբավորման անդամ երկրների մասնակցությունն աշխատանքի տարածաշրջանային բաժանմանը:
- Կոռելացիոն ռեգրեսիոն վերլուծության միջոցով կառուցվել է ԵԱՏՄ երկրների արտահանման դիվերսիֆիկացման/մասնագիտացման և բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ կախվածության ցրվածքի գծապատկերը, որը թույլ է տվել բացահայտել, որ եթե ԵԱՏՄ բոլոր երկրների համար ավելի նախընտրելի է մասնագիտացման խորացումը, ապա Հայաստանը՝ բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ աճի տեսանկյունից ունի արտահանման դիվերսիֆիկացման քաղաքականության որդեգրման կարիք:
- VAR -Vector AutoRegression մոդելի օգտագործման միջոցով իրականացվել է ԵԱՏՄ երկրների արդյունաբերության ծավալների ցնցումների վերլուծություն, որը թույլ է տվել բացահայտել հետևյալ օրինաչափությունը. եթե նախկինում ներքին պահանջարկի բավարարման համար ՀՀ-ն ավելացնում էր արդյունաբերական արտադրանքի ներմուծումը ՌԴ-ից, ապա այժմ այդ արտադրանքը արտադրվում է ազգային տնտեսության շրջանակներում, ինչը բացասաբար է ազդում ՌԴ, հետևաբար և ԵԱՏՄ արդյունաբերության ծավալների աճի վրա:

Ատենախոսության գործնական նշանակությունը և արդյունքների իրացումը: Հետազոտությունը աշխատանքի տարածաշրջանային բաժանման և մասնագիտացման տեսությունների զարգացմանը և ինտեգրացիոն խմբավորումների տնտեսական աճի տեմպերի վրա դրանց ազդեցությունների բացահայտմանը ուղղված գիտական վերլուծություն է:

Ատենախոսության արդյունքները կարող են օգտագործվել աշխատանքի տարածաշրջանային բաժանման միջպետական (տարածաշրջանային) կարգավորման և տարածաշրջանային արժեքային շղթային ձևավորման հայեցակարգային մոտեցումների կիրառման ժամանակ: Արդյունքները կարող են օգտակար լինել նաև ԵԱՏՄ երկրների սոցիալ-տնտեսական զարգացման և ինտեգրացոին գործընթացների խորացման տեսանկյունից: Աշխատանքի արդյունքները հետաքրքրություն են ներկայացնում նաև արտադրական կոոպերացման գործնական հիմնախնդիրների լուծման տեսանկյունից, այն առումով, որ հետազոտության հիման վրա ձևավորված առաջարկությունները, որոնք հատկապես վերաբերում են տարածաշրջանային արժեքային շղթաների ձևավորմանը, ուղղված են ԵԱՏՄ երկրների տնտեսական համագործակցության կատարելագործմանը և տնտեսական աճի ապահովմանը:

Ատենախոսության նյութերը կարող են օգտագործվել բարձրագույն ուսումնական հաստատություններում «Միջազգային տնտեսական հարաբերություններ» առարկայի դասավանդման ժամանակ:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Աշխատանքի հիմնական արդյունքները քննարկվել են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Միջազգային տնտեսական հարաբերություններ» ամբիոնի նիստում, ազգային և միջազգային գիտաժողովներում: Հետազոտության հիմնական արդյունքներն արտացոլվել են հեղինակի 6 գիտական հրապարակումներում, այդ թվում՝ մեկը՝ միջազգային:

Հետազոտության կառուցվածքը և ծավալը: Հետազոտությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Հիմնական բովանդակությունը շարադրված է 118 էջի վրա՝ ներառյալ գրականության ցանկը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ***ներածությունում*** հիմնավորվել են թեմայի արդիականությունն ու հրատապությունը, ներկայացվել է թեմայի ուսումնասիրվածության աստիճանը, առաջադրվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, սահմանվել՝ օբյեկտը և առարկան, ձևակերպվել՝ գիտական արդյունքներն ու նորույթը, ուղենշվել՝ տեսական և գործնական կիրառման հնարավորությունները, ինչպես նաև ներկայացվել են աշխատանքի ծավալն ու կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ ***«Աշխատանքի տարածաշրջանային բաժանման տեսական հիմնադրույթները»*** գլխում ներկայացվել է աշխատանքի տարածաշրջանային բաժանման էությունը, աշխատանքի մասնագիտացման և ինդուստրացման գործընթացների համակցման հիմնախնդիրները, քննական վերլուծության է ենթարկվել ինտեգրացիոն խմբավորումների շրջանակներում աշխատանքի տարածաշրջանային բաժանման հնարավորությունների իրացումը և աշխատանքի տարածաշրջանային բաժանման համաշխարհային փորձը: Տարածաշրջանային տնտեսական ինտեգրումը նպաստում է աշխատանքի միջազգային բաժանման խորացմանը: Աշխատանքի տարածաշրջանային բաժանումը աշխատանքի միջազգային բաժանմանը չի հակադրվում, դրանք միասնական են, տարբեր են միայն դրանց ընդգրկման սահմանները: Աշխատանքի տարածաշրջանային բաժանումն ունի յուրահատկություն, որ երբեմն հանգեցնում ինտեգրացիոն միավորման անդամների մի շարք արտադրությունների միասնականացմանը, որը մասշտաբի էֆեկտի շնորհիվ, թույլ է տալիս համաշխարհային շուկայում բարձրացնել ինտեգրացիոն խմբավորման շուկայում արտադրված արտադրանքի մրցունակությունը: Աշխատանքի տարածքաշրջանային բաժանման սկզբունքն այն է, որ յուաքանչյուր ինտեգրվող երկիր մասնագիտացման խորացման շնորհիվ, հրաժարվում է առավել թանկարժեք արտադրություններից և մրցակցային ու համեմատական առավելությունների հիման վրա արտադրում է ավելի էժան ապրանքներ: Ինտեգրացիոն գործընթացների հետագա խորացման դեպքում սա

թույլ է տալիս երրորդ երկրներից ներմուծումը փոխարինել ինտեգրացիոն խմբավորման անդամ երկրներից ներմուծմամբ: Արդյունքում, ինտեգրացիոն խմբավորման շրջանակներում ձևավորվում է ապրանքների բազմազանեցված շուկա: ***Այսպիսով, աշխատանքի տարածաշրջանային բաժանումը ինտեգրացիոն խմբավորման անդամ երկրների միջև աշխատանքի տարածքային բաժանման այնպիսի ձև է, որի դեպքում գործընկեր երկրները մասնագիտանում են այն ապրանքների արտադրության մեջ, որոնց համար տնօրինում են համեմատական առավելությունների՝ երրորդ երկրներից ներմուծման ծավալները կրճատելու և ներտարածաշրջանային առևտուրը խթանելու նպատակով:***

Յուրաքանչյուր երկիր աշխատանքի տարածաշրջանային բաժանման և մասնագիտացման համար ունի իր ելակետային պայմանները և յուաքանչյուր ոլորտ ներկայացնում է իր պահանջները դրանց նկատմամբ: Այս պահանջները պայմանավորված են ոլորտի տեխնոլոգիական առանձնահատկություններով, որին անհրաժեշտ են բարձրորակ աշխատուժ, համապատասխան հողեր, ջրային, էներգետիկ ռեսուրսներ, հումք, փոխադրամիջոցներ և ենթակառուցվածքների որոշակի զարգացման մակարդակ: Ելնելով նշված գործոններով ապահովվածության աստիճանից՝ որոշվում է տվյալ երկրի դերը աշխատանքի տարածաշրջանային բաժանման ճյուղային կամ ներճյուղային դասակարգման մեջ: Միայն այս պայմաններում երկիրը կարող է էական ներդրում ունենալ հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման և ինտեգրացիոն խմբավորման տնտեսական աճի մեջ:

Աշխատանքում առանձնացվել է երկրների հինգ տիպ, որոնք աշխատանքի տարածաշրջանային բաժանման և մասնագիտացման գործընթացներում հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման և ինտեգրացիոն խմբավորման տնտեսական աճի վրա ազդում են ելնելով իրենց բնական առանձնահատկություններից և ռեսուրսաապահովվածությունից: Տրվել է դրանց մանրամասին բնութագիրը:

Ատենախոսության երկրորդ՝ ***«Աշխատանքի տարածաշրջանային բաժանման գործընթացները Եվրասիական տնտեսական միության շրջանակներում»*** գլխում, տրվել է ԵԱՏՄ երկրներում աշխատանքի տարածաշրջանային բաժանման վրա տնտեսական ինտեգրման ազդեցության մեթոդոլոգիական գնահատականը, իրականացվել է ԵԱՏՄ երկրների փոխադարձ առևտրի վերլուծություն, որի արդյունքում արտահանման դիվերսիֆիկացման ռազմավարությունը, ներկայացվել է որպես ԵԱՏՄ երկրների մրցունակության բարձրացման գործիք:

Աշխատանքի միջազգային բաժանման գործընթացներում առանձին երկրների դերի էմպիրիկ գնահատական տնտեսագիտական գրականության մեջ տրվում է Բ. Բալասսայի ներճյուղային միջազգային մասնագիտացման և արտահանման հարաբերական մասնագիտացման գործակիցների միջոցով:

Ընդհանրացնելով վերը նշված երկու ինդեքսները, ինտեգրացիոն խմբավորման անդամ երկրների մասնակցությունը աշխատանքի տարածա-

շրջանային բաժանմանը՝ ճյուղային մասնագիտացման տեսանկյունից գնահատեու նպատակով առաջարկվել է աշխատանքի ճյուղային տարածաշրջանային բաժանման հետևյալ գործակիցը՝

$$IRLD_{ij} = \frac{x_{ij} / \Sigma_i x_{ij}}{\Sigma_j x_{ij} / \Sigma_i \Sigma_j x_{ij}} \quad (1)$$

Սույն ցուցանիշի համարիչը իրենից ներկայացնում է j երկրի համախառն արտահանման ծավալում i ճյուղի արտահանման տեսակարար կշիռը, որտեղ x_{ij} -ն j երկրի i ճյուղի արտահանման ծավալն է, իսկ հայտարարը՝ i ճյուղի արտահանման տեսակարար կշիռն է ինտեգացիոն խմբավորման անդամ երկրների համախառն արտահանման ծավալում: Այսպիսով, $IRLD_{ij}$ գործակիցը թույլ է տալիս համեմատել ազգային արտահանման կառուցվածքը ինտեգրացիոն խմբավորման անդամ երկրների արտահանման կառուցվածքի հետ: Եթե $IRLD_{ij}$ = 1-ի, ապա տվյալ երկրում տվյալ ճյուղի արտահանման պոտենցիալը հավասար է ինտեգրացիոն խմբավորման անդամների արտահանման միջին արժեքին: Եթե $IRLD_{ij}$ >1, ապա երկիրը մասնագիտացած է տվյալ ճյուղի արտադրանքի արտադրության վրա, և հակառակը, եթե $IRLD_{ij}$ <1:

Աշխատանքում հաշվարկվել է նաև ԵԱՏՄ երկրների $IRLD_{ij}$ գործակիցները, որը թույլ է տվել համեմատել առանձին երկրների ազգային արտահանման կառուցվածքը ինտեգրացիոն խմբավորման արտահանման կառուցվածքի հետ և ավելի ճշգրիտ պատասխան տալ այն հարցին, թե արդյոք երկրները տարածաշրջանային առևտուրը բխեցնում են համեմատական առավելություններից, թե ոչ:

Կատարված հաշվարկները թույլ են տվել եզրակացնել, որ ԵԱՏՄ երկրների արտահանման կառուցվածքում համեմատական մեծ առավելություն ունեցող ապրանքների շարքում համընկնումները բավականին քիչ են, ինչը վկայում է, որ ուսումնասիրվող երկրներն ունեն արտաքին առևտրի փոխլրացնող կառուցվածք: Մասնավորապես, ի տարբերություն աշխատանքի միջազգային բաժանման մեջ ունեցած դերի, աշխատանքի տարածաշրջանային բաժանման առումով ՀՀ մասնակցությունն ավելի կողմնորոշված է դեպի պատրաստի ապրանքների արտահանումը, որը չի վերաբերվում, սակայն, տեխնոլոգիական ապրանքներին:

Բելառուսը տարածաշրջանային առևտրում համեմատական մեծ առավելություն ունի ծղոտի և դրանից պատրաստված իրերի, գործվածքների, տեքստիլ արտադրանքի, գորգերի և թելերի, անասնաբուծական արտադրանքի գծով: Ղազախստանը ևս ունի տեքստիլ արտադրանքի արտահանման համեմատական առավելություններ: Սակայն, այստեղ առավել ակնհայտ է արտահանման հումքային ուղղվածությունը, հատկապես ցինկի, արճիճի, պղնձի, հանքաքարի արտահանման մասնագիտացման առումով:

Ղրղզստանը տարածաշրջանային առևտրում ունի գյուղատնտեսական ապրանքների, բնական և արհեստական մարգարիտի, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, թանկարժեք մետաղների արտահանման համեմատական մեծ առավելություններ:

Ռուսաստանի մասնակցությունը տարածաշրջանային աշխատանքի բաժանմանը, ԵԱՏՄ երկրների համեմատությամբ, առավել տեխնոլոգիատար է: Տեխնոլոգիական ապրանքներից արտահանման ամենամեծ առավելությունը դրսևորվում է զենք, զինամթերքի, թռչող ապարատների առումով: Ունի նաև նիկելի, անագի, թղթի արտահանման համեմատական առավելությունը:

Կարելի է պնդել, որ ԵԱՏՄ երկրների առևտրատնտեսական համագործակցության խորացմանը կարող է նպաստել արտահանման դիվերսիֆիկացումը, ճյուղային մասնագիտացման խորացումը, տեխնոլոգիատար ապրանքների արտադրությունը և երկրների մրցունակության բարձրացումը::

Ատենախոսությունում որոշակիացնել արտահանման զարգացման երկու՝ դիվեսիֆիկացում և մասնագիտացում ռազմավարություններից ԵԱՏՄ երկրների ընտրության հարցը: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ԵԱՏՄ երկրների արտահանման համակենտրոնացման համաթվերը գործընկեր երկրներում (վկայում են մրցակցության տարբեր մակարդակների մասին) տարբեր են (գծապատկեր 1):



Գծապատկեր 1. ԵԱՏՄ երկրների արտահանման համակենտրոնացման համաթվերը 2012-2019 թթ.[5]

Արտահանման համակենտրոնացման ամենացածր մակարդակը Բելառուսում է, այն 2019 թ. կազմել է 0.179 տոկոսային կետ՝ նախորդ տարիների նկատմամբ աստիճանաբար վատթարացնելով դիրքերը: Բելառուսում համակենտրոնացման համեմատաբար ցածր աստիճանը պայմանավորված է սովետական ժամանակաշրջանի արտադրական բազայի պահպանմամբ և տնտեսության կենտրոնացված կառավարմամբ, ինչը թույլ է տալիս մեծ թվով արտադրողների համար պահպանել այլ երկրների շուկաների հասանելիությունը՝ ակնհայտ կամ թաքնված դեմպինգային քաղաքականության շնորհիվ:

Հայաստանում ևս արտահանման համակենտրոնացման աստիճանը շատ բարձր չէ՝ 2019 թ. այն կազմել է 0.299 տոկոսային կետ: Հայաստանին բնորոշ են արտահանման կողմնորոշում ունեցող գյուղատնտեսական փոքրամասշտաբ

[5] http://unctadstat.unctad.org/wds/TableViewer/tableView.aspx

արտադրություններ, սննդի վերամշակման համեմատաբար խոշոր արտադրողների առկայություն, հանքահումքային արտադրանքի, ինչպես նաև թանկարժեք ու կիսաթանկարժեք մետղաների արտահանում:

Արտահանման համակենտրոնացման աստիճանը բավականաչափ ցածր է նաև Ղրղզստանում, ինչը հիմնականում չինական ապրանքների վերաարտահանման (լայն սպառման ապրանքներ) և բազմատեսակ տեղական գյուղմթերքի արտահանման արդյունք է:

Վերջին տարիներին Ռուսաստանի արտահանման համակենտրոնացման համաթիվը ցուցաբերում է դրական միտում. այն 2012 թ. 0.382 տոկոսային կետից 2019 թ. կազմել է 0.315: Փաստորեն, կարելի է պնդել, որ ԵԱՏՄ առանցքային երկու երկրները՝ Ղազախստանը և Ռուսաստանը խմբավորման մյուս երկրների համեմատ ունեն արտահանման ամենաբարձր համակենտրոնացման մակարդակը: Ընդ որում, Ռուսաստանի արտահանման համակենտրոնացման համաթիվը մոտ 1.78 անգամ պակաս է, քան Ղազախստանինը, քանի որ Ռուսաստանը ունի արտահանման ուղղված արդյունաբերական վերամշակման ենթակա ապրանքների ավելի լայն տեսականի:

ԵԱՏՄ երկրների ներմուծման համակենտրոնացման համաթվերը (գծապատկեր 2) վկայում են ներմուծման դիվերսիֆիկացվածության բավականաչափ բարձր մակարդակի մասին:



Գծապատկեր 2. ԵԱՏՄ երկրների ներմուծման համակենտրոնացման համաթվերը 2012-2019 թթ.[6]

Այսպիսով, ԵԱՏՄ բոլոր երկրներում առկա է տնտեսության բացության բարձր մակարդակ: Այս պայմաններում ներտարածաշրջանային փոխադարձ առևտրի զարգացումը՝ երրորդ երկրներից ներմուծման փոխարինման նպատակով, կպահանջի սեփական արտադրության մրցունակության էական բարձրացում:

Արտահանման դիվերսիֆիկացման/մասնագիտացման և բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ կախվածությունը ցույց է տրվել մաթեմատիկական մոդելների և վիճակագրական վերլուծության միջոցով: Կոռելացիոն ռեգրեսիոն վերլուծու-

[6] http://unctadstat.unctad.org/wds/TableViewer/tableView.aspx

թյան միջոցով կառուցվել է կոռելացիայի ցրվածքի գծապատկերը, որը ցույց է տալիս ԵԱՏՄ երկրների մեկ շնչի հաշվով ՀՆԱ և արտահանման դիվերսիֆիկացման/մասնագիտացման կախվածությունը (աղյուսակ 1, գծապատկեր 3):

Աղյուսակ 1

ԵԱՏՄ երկրների բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ և արտահանման մասնագիտացման/դիվերսիֆիկացման կոռելացիան

	ՀՆԱ-մասնագիտացում	ՀՆԱ-դիվերսիֆիկացիա
Հայաստան	-0,238995512	0,419672445
Բելառուս	0,361989216	0,156998844
Ղազախստան	0,657809258	-0,053072948
Ղրղզստան	0,543582077	-0,599990998
Ռուսաստան	0,862632625	-0,909248982



Գծապատկեր 3. ԵԱՏՄ երկրների բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ կախվածությունը արտահանման մասնագիտացման և դիվերսիֆիկացման մակարդակից

Ակնհայտ է, որ այս կախվածությունը ոչ գծային է, սակայն, ի տարբերություն ԵԱՏՄ մյուս երկրների, ՀՀ-ում արտահանման մասնագիտացման/համակենտրոնացման 1%-ով ավելացումը հանգեցնում է բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ 0.2% անկմանը: Բելառուսում մասնագիտացման խորացումը ավելի դրական է ազդում ՀՆԱ ավելացման վրա, քան դիվերսիֆիկացումը, իսկ Ղազախսատնում, Ղրղզստանում ու Ռուսաստանում դիվերսիֆիկացման 1% աճը հանգեցնում է ՀՆԱ անկմանը, այնինչ մասնագիտացման խորացումը ՀՆԱ վրա ունենում է դրական ազդեցություն: Մասնավորապես, Ռուսաստանում ՀՆԱ-մասնագիտացում/դիվերսի-ֆիկացում կապը բավականին ուժեղ է, քանի որ 1%-ով մասնագիտացման խորացումը հանգեցնում է ՀՆԱ 0.86% աճին, իսկ 1% դիվերսիֆիկացման ավելացումը՝ 0.9% ՀՆԱ անկմանը: Փաստորեն, եթե ԵԱՏՄ բոլոր երկրների

համար ավելի նախընտրելի է մասնագիտացման խորացումը, ապա Հայաստանը՝ բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ աճի տեսանկյունից ունի արտահանման դիվերսիֆիկացման քաղաքականության իրականացման կարիք:

Ատենախոսության երրորդ՝ ***«Աշխատանքի տարածաշրջանային բաժանման հեռանկարները ԵԱՏՄ երկրներում»*** գլուխը, նվիրված է ԵԱՏՄ երկրների՝ աշխատանքի տարածաշրջանային բաժանման համատեքստում արտադրության արդյունավետության բարձրացման գործոնների վերլուծությանը, ՀՀ մասնագիտացման մակարդակի գնահատմանը և ԵԱՏՄ երկրներում արտադրական կոոպերացիայի հեռանկարների բացահայտմանը:

Այդ տեսանկյունից հետաքրքիր է ուսումնասիրել, թե ինչպես է ազդում աշխատատար ապրանքների արտադրությունը ԵԱՏՄ երկրների արտահանման վրա, ինչը կարելի է իրականացնել արտահանման աշխատատարության ինդեքսի հաշվարկամն միջոցով՝

$$E_{LI} = \frac{I_W}{I_{GDP}} \; x \; E_{GDP} \; (2), \text{ որտեղ՝}$$

E_{LI} – արտահանման աշխատատարության ինդեքսն է,

I_W – անվանական աշխատավարձի ինդեքսն է,

I_{GDP} – ՀՆԱ ինդեքսն է, ըստ սպառման,

E_{GDP} – արտահանման տեսակարար կշիռն է ՀՆԱ մեջ:

Բերված ինդեքսը ցույց է տալիս աշխատուժի վրա կատարված ծախսերի մակարդակը (Աղյուսակ 2): Աշխատանքի վրա ամեմամեծ ծախսերը կատարվում են ՀՀ-ում, իսկ Ռուսաստանում, Ղազախստանում ու Ղրղզստանում այդ ցուցանիշը գտնվում է միջին մակարդակի վրա: Բելառուսում արտահանման մեջ աշխատուժի վրա կատարված ծախսերը նվազագույնն են, ինչը նշանակում է, որ Բելառուսից արտահանումը ավելի մրցունակ է, քան ԵԱՏՄ մյուս երկրներից:

Աղյուսակ 2

Արտահանման մեջ աշխատուժի վրա կատարված ծախսերի ցուցանիշը 2014-2017 թթ.-ին[7]

Երկիրը	2014	2015	2016	2017
Հայաստան	0.042	0.041	0.042	0.040
Բելառուս	0.018	0.015	0.014	0.015
Ղազախստան	0.027	0.027	0.025	0.027
Ղրղզստան	0.023	0.025	0.027	0.028
Ռուսաստան	0.035	0.034	0.032	0.031

ԵԱՏՄ երկրների գյուղատնտեսական և արդյունաբերական ապրանքների արտադրության մասնագիտացման մակարդակը պարզելու նպատակով

[7] Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից Եվրասիական հանձնաժողովի պաշտոնական կայքի տվյալների հիման վրա՝ http://www.eurasiancommission.org/hy/Pages/default.aspx

հաշվարկել է գյուղատնտեսության և արդյունաբերության ճյուղերի մասնագիտացման ինդեքսները, հետևյալ բանաձևով[8]՝

$$I_{rs} = \frac{N_i}{M_i} \text{ (3), որտեղ}$$

I_{rs} – ը՝ ճյուղային տարածաշրջանային մասնագիտացման ինդեքսն է,

N_i – ը՝ ինտեգրացիոն խմբավորման անդամ երկրի i ճյուղի արտադրության տեսակարար կշիռն է խմբավորման նույն ճյուղի համախառն արտադրանքում,

M_i – ը՝ ինտեգրացիոն խմբավորման անդամ երկրի տեսակարար կշիռն է արդյունաբերության կամ գյուղատնտեսության մեջ:

Ճյուղի մասնագիտացման բարձր մակարդակի վկայություն է, եթե ինդեքսը գերազանցում է 1-ը: Աղյուսակ 3-ում բերված տվյալները վկայում են, որ գյուղատնտեսական ապրանքների արտադրության մասնագիտացման ամենաբարձր մակարդակը առկա է Ղրղզստանում:

Աղյուսակ 3

ԵԱՏՄ երկրների գյուղատնտեսական ապրանքների արտադրության մասնագիտացման ինդեքսները 2014-2017 թթ.[9]

Երկիրը	*2014*	*2015*	*2016*	*2017*
Հայաստան	3.26	2.69	2.45	2.38
Բելառուս	2.57	2.16	2.31	2.53
Ղազախստան	1.33	1.16	1.11	1.16
Ղրղզստան	7.83	6.58	5.84	5.81
Ռուսաստան	0.87	0.89	0.9	0.89

Թեև ինդեքսը 2014-2017 թթ. ունեցել է նվազման միտում, այնուամենայնիվ 2017 թ. Ղրղզստանի ՀՆԱ արտադրության 40%-ը բաժին է ընկել գյուղատնտեսական արտադրանքի արտադրությանը: Հայաստանը ԵԱՏՄ երկրների շրջանակներում երկրորդն է գյուղատնտեսական արտադրանքի մասնագիտացման մակարդակով, սակայն ինդեքսի մեծությունը 2 անգամ ետ է մնում Ղրղզստանի համապատասխան ցուցանիշից: Այնուամենայնիվ, 2014-2017 թթ. ինդեքսն ընդունել է 1-ից մեծ արժեք, ինչը վկայում է երկրի գյուղատնտեսական արտադրանք արտադրելու բարձր մասնագիտացման մակարդակի մասին: Այդ առումով Հայաստանի հետ համադրելի մակարդակի վրա է գտնվում Բելառուսը, որտեղ համախառն ՀՆԱ մեջ գյուղատնտեսության բաժինը 2017 թ. կազմել է 17.3%: Գյուղատնտեսության տարածաշրջանային մասնագիտացման ինդեքսը 1-ից մեծ է նաև Ղազախստանում, որտեղ ուսումնասիրվող ժամանակահատվածում 2014 թ. ստացել է ամենաբարձր արժեքը՝ 1.33: Ռուսաստանը ԵԱՏՄ երկրների շրջանակներում միակ երկիրն է, որտեղ 2014-2017 թթ. տվյալներով գյուղատնտեսության տարածաշրջանային մասնագիտացման ինդեքսը փոքր է 1-ից: Սա փաստում է,

[8] Коваленко Е. Г., Региональная экономика и управление, Учебное пособие. - СПб.: Питер, 2005, стр. 30.

[9] Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից Եվրասիական հանձնաժողովի պաշտոնական կայքի տվյալների հիման վրա՝ http://www.eurasiancommission.org/hy/Pages/default.aspx

որ Ռուսաստանը ԵԱՏՄ մյուս երկրների համար գյուղատնտեսական արտադրանքի իրացման լայն շուկա է: Հաշվարկվել են նաև ԵԱՏՄ երկրների ճյուղային մասնագիտացման ինդեքսները՝ հանքարդյունաբերության և վերամշակող արդյունաբերության ոլորտներում:

ԵԱՏՄ երկրների աշխատանքի տարածաշրջանային բաժանմանը մասնակցության և արտադրության մասնագիտացման համապարփակ վերլուծություն կատարելու համար խիստ կարևոր է ունենալ ոչ միայն որակական արդյունքեր և գնահատականներ, այլև կարողանալ գնահատել ստացված որակական արդյունքների քանակական չափը: Նմանօրինակ գնահատումն իրականացվում է մասնակի հավասարակշռության մոտեցման շրջանակներում՝ առանց հաշվի առնելու տնտեսական ցնցումների ամբողջական բնույթը, ինչպես նաև տնտեսական համակարգում դրանց ընդհանուր տարածումը:

Ատենախոսության շրջանակներում արտահանման մասնագիտացման գնահատման համար նախ անհրաժեշտ է ընտրել այն փոփոխականների կազմը, որոնք արտացոլում են մասնագիտացումը: Այդ նպատակով ընտրվել է դեպի ԵԱՏՄ երկրներ արտահանման մեջ մեծ կշիռ (42.6%՝ 2017 թ-ին) ունեցող «պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախումբը:

ՀՀ արտահանման մասնագիտացման մակարդակը գնահատելու նպատակով առաջ են քաշվել հետևյալ խնդիրները.

- գնահատել «պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբի արտահանման՝ ընդհանուր արտահանման մեջ ունեցած կշռի, որպես մասնագիտացումը բնութագրող ինդիկատորի ազդեցությունը դեպի ԵԱՏՄ երկրներ արտահանման վրա,
- գնահատել ԵԱՏՄ անդամակցության ազդեցությունը պատրաստի սննդի արտահանման մասնագիտացման վրա,
- գնահատել «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբի արտահանման՝ ընդհանուր արտահանման մեջ ունեցած կշռի ազդեցությունը դեպի ԵԱՏՄ երկրներ արտահանման վրա:

Պատրաստի սննդի արտահանման կշռի ազդեցությունը դեպի ԵԱՏՄ երկրներ արտահանման վրա գնահատելու համար կառուցվել է էկոնոմետրիկ մոդել, որտեղ դիտարկվող փոփոխականից բացի, ներառել ենք նաև արտահանման վրա ազդող մյուս գործոնները: Այսինքն, մոդելում մասնագիտացման ցուցանիշի ազդեցությունը դեպի ԵԱՏՄ երկրներ արտահանման աճի տեմպերի վրա «կարգավորում ենք» այլ փոփոխականներով, որոնք դրա վրա ազդող նշանակալի գործոններ են՝ ստանալու առավելագույն արժանահավատ գնահատականներ՝ ինչպես տնտեսագիտության, այնպես էլ վիճակագրության տեսանկյունից: Մոդելում ներառվել են արտահանման առաջարկի գործոնն արտացոլող ՀՀ ՀՆԱ աճի տեմպը, պահանջարկի գործոնն արտացոլող ՌԴ ՀՆԱ աճի տեմպը և առևտրի պայմաններն արտացոլող ՌԴ

ռուբլի/ՀՀ դրամ փոխարժեքը[11]: Փոփոխականները եռամսյակային պարբերականությամբ են և ընդգրկում են 2003 թ.-ի առաջին եռամսյակից մինչև 2018 թ.-ի 4-րդ եռամսյակը: Անհայտ փոփոխականների գնահատականների վստահելիության ապահովման համար առաջնային խնդիրը ներգրավվող շարքերի ստացիոնարության ստուգումն է: Հետազոտությունում ընդգրկված ժամանակային շարքերը ստացիոնար են: Մոդելի գնահատումը, ցույց է տալիս, որ փոփոխականների մի մասը ոչ նշանակալի են, ինչը բացատրվում է դրանց մեջ առկա ուշացող (լագային) ազդեցություններով: Մյուս կողմից, մոդելին բնորոշ է դրական ավտոկոռելացիան, ինչը տեսանելի էր Դարբին-Ուոթսոնի հայտանիշից: Մոդել ներառելով փոփոխականները լագերով, ինչպես նաև բացատրվող փոփոխականի նախորդ լագը (հաշվի առնելով ավտոկոռելացիայի առկայությունը), ստացվել է մոդելի հավասարում, ըստ որի գնահատված փոփոխականները նշանակալի են հիմնականում 5 տոկոս վստահելիության միջակայքում, իսկ մոդելի բացատրողականությունը բարձր է:

Մոդելը ցույց է տալիս, որ պատրաստի սննդի արտահանման կշռի ավելացումը նշանակալի դրական ազդեցություն ունի դեպի ԵԱՏՄ երկրներ արտահանման աճի վրա: Այդ ապրանքախմբի՝ ՀՀ արտահանման մեջ ունեցած կշռի մեկ տոկոսային կետով ավելացումը նույն եռամսյակում հանգեցնում է դեպի ԵԱՏՄ արտահանման աճի տեմպերի արագացմանը 0.65 տոկոսային կետով:

Դեպի ԵԱՏՄ արտահանման վրա դրական ազդեցություն են ունենում և պահանջարկի և առաջարկի գործոնները, ինչպես նաև դեպի ԵԱՏՄ արտահանման առյուծի բաժինն ընդգրկող ՌԴ տնտեսական աճի տեմպի 1 տոկոսային կետով ավելացումը նույն եռամսյակում հանգեցնում է դեպի ԵԱՏՄ ՀՀ արտահանման աճի տեմպերի արագացմանը 0.2 տոկոային կետով: ՀՀ ՀՆԱ աճի տեմպի 1 տոկոսային կետով արագացումը հանգեցնում է դեպի ԵԱՏՄ արտահանման աճի տեմպերի արագացմանը 0.1 տոկային կետով 3 եռամսյակ հետո:

Դեպի ԵԱՏՄ արտահանման վրա նշանալիորեն ազդում է ռուբլի/դրամ փոխարժեքը: Երբ ռուբլի/դրամ փոխարժեքի արժեզրկման տեմպը արագանում է 1 տոկոսային կետով, դեպի ԵԱՏՄ երկրներ ՀՀ արտահանման աճի տեմպն արագանում է 0.07 տոկոսային կետով 2 եռամսյակ հետո:

Այսպիսով, ատենախոսության հիմնական արդյունքների ընդհանրացումը թույլ է տալիս կատարել հետևյալ **եզրակացությունները.**

Աշխատանքի տարածաշրջանային բաժանումը և վերարտադրության գործընթացի արդյունավետությունը, առաջին հերթին կախված են երկրների ռեսուրսաապահովվածության աստիճանից, որոնք ապրանքային և ռեսուրսային շուկաներում անցնում են արժեավելացման գործընթացներով: ԵԱՏՄ երկրների փոխադարձ առևտրի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ

[11] Արտահանման վրա ազդող գործոնների վերաբերյալ նման մոտեցում տե՛ս United Nations Conference on Trade and Development (2005), Developing Countries in International Trade and Development Index 2005, Determinants of Export Performance, p. 66-70. https://unctad.org/en/Docs/ditctab20051_en.pdf:

Ռուսաստանը, Բելառուսը և Ղազախստանը օգտագործում են փոխադարձ առևտրի համեմատական առավելությունները, իսկ Հայաստանը և Ղրղզստանը դեռ թույլ են ինտեգրված միությանը: Փոխադարձ առևտրի զարգացման համար կարևոր է առևտուր անող երկրների աշխարհագրական մերձությունը: Վիճակագրական տվյալները փաստում են, որ Ղրղզստանը ԵԱՏՄ տարածքում ամենապակաս ինտեգրված երկիրն է, որը հատկապես գյուղատնտեսական շուկայում ունի առուտայդերի կարգավիճակ: Առավել թույլ են վերջինիս կապերը ՀՀ հետ: ՀՀ-ն իր հերթին ակնհայտորեն ետ է մնում ԵԱՏՄ մյուս գործընկերներից, ինչպես գյուղատնտեսական, այնպես էլ արդյունաբերական ապրանքների արտահանման ու ներմուծման գծով:

ԵԱՏՄ անդամների հողային ռեսուրսներով ապահովվածությունը նրանց համեմատական առավելությունների առաջնային պայմանն է, որը կարող է բնականոն ձևով վերածվել բացարձակ առավելության՝ կապիտալի և նոր տեխնոլոգիաների օգտագործման արդյունքում: Խիստ հրատապ է ԵԱՏՄ երկրների համապատասխան գիտատեխնոլոգիական ռեսուրսների տվյալների շտեմարանի ստեղծումն ու դրա գործունեության համակարգումը՝ տնտեսապես շահավետ պատվերների միջոցով: Նման մեխանիզմի ներդրումը կհանգեցնի թե՛ ԵԱՏՄ երկրների միջև աշխատանքի տարածաշրջանային բաժանման արդյունավետության բարձրացմանը, թե՛ տնտեսական աճին, թե՛ ինտեգրացիոն գործընթացների ինտենսիվացմանը, և թե՛ արդյունաբերական համալիրի արդիականացմանը և մրցունակության բարձրացմանը:

Տնտեսամաթեմատիկական վերլուծության արդյունքները փաստում են նաև, որ ՀՀ-ն չունենալով զարգացած արդյունաբերական համալիր, արդյունաբերական արտադրանքը ներմուծում է հիմնականում ՌԴ-ից՝ այդպիսով խթանելով վերջինիս զարգացումը: Սակայն, երբ ՀՀ արդյունաբերության արտադրանքի ծավալը աճում է, զուգահեռաբար կրճատվում է ՌԴ-ից արդյունաբերական արտադրանքի ներմուծումը: Այսինքն, ՀՀ արդյունաբերական արտադրանքի աճը բացասական է անդրադառնում ՌԴ արդյունաբերական արտադրանքի թողարկման ծավալների վրա: Հատկանշական է նաև, որ ՀՀ արդյունաբերության զարգացումը, ՀՆԱ-ի աճին զուգընթաց՝ չի ուղղորդվում արտահանման աճով, և միտված է բավարարելու ներքին պահանջարկը: Արդյունքում, եթե նախկինում ներքին պահանջարկը բավարարվում էր ՌԴ-ից ներմուծման հաշվին, այժմ դա տեղի ունի հայրենական արտադրանքի հաշվին: ԵԱՏՄ անդամ երկրներն ունենալով կոոպերատիվ համագործակցության բարձր ներուժ, այն օգտագործում են ոչ լիարժեք:

Արդի պայմաններում արդյունաբերության կայուն զարգացում ապահովելու և ռիսկերը նվազեցնելու համար անհրաժեշտ է անդամ բոլոր երկրների կողմից միասնական արդյունաբերական քաղաքականության նկատմամբ ռազմավարական և հեռանկարային մոտեցման դրսևորում, որի առաջնային քայլերից մեկը կարող է լինել արդյունաբերական համալիրի թվային փոխակերպումը: Այն

կդառնա անդամ երկրների տնտեսության զարգացման հիմնարար խթաններից մեկը:

ԵԱՏՄ տնտեսական համագործակցության խորացման ամենահեռանկարային և հետաքրքիր ուղղություններից մեկը «դրոշակակիր» նախագծերի իրականացումն է և ինտեգրացիոն միության ապրանքանիշերի ստեղծումը՝ միջպետական արդյունաբերական կոոպերացման հիման վրա: Դրա լավագույն օրինակն, իհարկե, եվրոպական հայտնի «Airbus» ընկերությունն է: Արդյունաբերական և հետազոտական համագործակցությանը զուգահեռ, որն իրականացվում է 15 «Եվրասիական տեխնոլոգիական պլատֆորմների» շրջանակներում, այժմ քննարկվում է նաև տրակտորների, տրանսֆորմատորների և տիեզերական արբանյակների համատեղ արտադրության հնարավորությունը:

Մինչ այժմ արդյունաբերական կոոպերացման ոլորտում արտադրական տեխնոլոգիական շղթաների ձևավորմանը նպաստող հստակ քաղաքականություն ԵԱՏՄ շրջանակներում չի իրացվում: Ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում Միության ապրանքանիշերի (բրենդ) նկատմամբ անհրաժեշտ է ձևավորել և պահպանել համապատասխան պահանջարկ:

Ատենախոսության հիմնական դրույթներն հրապարակվել են հեղինակի հետևյալ գիտական աշխատանքներում.

1. Կարապետյան Վ., «Աշխատանքի տարածաշրջանային բաժանման համաշխարհային փորձը»: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր, Երևան 2017, էջ 589-594: https://asue.am/upload/files/Gitajoxovi-nyuter.pdf
2. Վ. Կարապետյան, «Արտահանման մասնագիտացման ռազմավարությունը որպես ԵԱՏՄ երկրների մրցունակության բարձրացման գործիք»: ՀՊՏՀ Բանբեր 2018, N 1, էջ 49-56: https://asue.am/upload/files/science/banber/2018-year-1/6-B%202018.1.5.pdf
3. Карапетян В., Галоян Д. Р., Мазуренко О. М., «Особенности промышленнои˘ политики России в контексте структурных изменений»: Экономическая наука сегодня. Сб. науч. ст. / БНТУ. – Минск, 2018. – Вып. 7, с. 76–83. https://rep.bntu.by/bitstream/handle/data/47951/Osobennosti_promyshlennoj_politiki_Rossii_v_kontekste_strukturnyh_izmenenij.pdf?sequence=1&isAllowed=y
4. Կարապետյան Վ., «Աշխատանքի տարածաշրջանային բաժանման հնարավորությունները ինտեգրացիոն խմբավորումների շրջանակներում. հայեցակարգային մոտեցումներ»: Այլընտրանք գիտական հանդես 2018 #1, էջ 243-248: http://surl.li/czsnf
5. Կարապետյան Վ., «ԵԱՏՄ երկրների փոխադարձ առևտրի վերլուծությունը»: Ֆինանսներ և էկոնոմիկա 1-2 (208-2010) 2018, էջ 111-114:
6. Կարապետյան Վ., «ՀՀ արտադրական մասնագիտացման գնահատականը ԵԱՏՄ անդամակցության համատեքստում»: ՀՊՏՀ Բանբեր 2021 N1, էջ 154-161:https://asue.am/upload/files/science/banber/2021-year-1/B%2010.pdf

ВРАМ ВЛАДИМИРОВИЧ КАРАПЕТЯН

ПРОБЛЕМЫ РЕГИОНАЛЬНОГО РАЗДЕЛЕНИЯ ТРУДА В РАМКАХ СОТРУДНИЧЕСТВА ЕВРАЗИЙСКОГО ЭКОНОМИЧЕСКОГО СОЮЗА

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.06 - «Международная экономика».

Защита диссертации состоится 10 сентября 2022 года, в 14^{00}, на заседании Специализированного совета по экономике 014 ВАК РА, действующего в Армянском государственном экономичеком университете по адресу: 0025, г. Ереван, ул. Налбандяна 128.

АННОТАЦИЯ

Развитие интеграционных процессов в Евразийском регионе имеет целью обеспечить синергический эффект, который должен основываться на более системном использовании конкурентных преимуществ стран интеграционной группировки и формировании региональных стоимостных цепочек, что позволит обеспечить долгосрочный экономический рост посредством крестообразного использования рабочей силы и капитала.

Исследование регионального разделения труда, важнейшего фактора обеспечения экономического роста стран ЕАЭС, а также принципов и закономерностей региональной производственной кооперации, нуждается в более системном подходе. Их исследование ценно с точки зрения того, что полученные результаты могут быть использованы при разработке промышленной политики стран ЕАЭС.

Целью исследования является выявление влияния специализации и кооперации производства на долгосрочный экономический рост и конкурентоспособность стран ЕАЭС на основе изучения предпосылок и закономерностей регионального разделения труда.

В соответствии с указанной целью, в рамках диссертации были поставлены и решены **следующие задачи**:

- выявить и описать условия, в рамках которых идет процесс регионального разделения труда и которые оказывают влияние на экономический рост стран,
- изучить теоретические концепции реализации преимуществ регионального разделения и специализации труда в рамках различных интеграционных объединений,
- выявить практические проблемы регионального разделения труда и на основе анализа индексов концентрации/диверсификации экспорта и импорта

государств-членов ЕАЭС выявить сферы производственной специализации и возможности производственной кооперации этих стран,

- на основе изучения качественных и количественных характеристик внешнеторговых потоков стран-членов ЕАЭС выявить их влияние на экономическое и промышленное развитие интеграционной группировки,
- оценить возможности кооперации производства и формирования региональных стоимостных цепей между странами ЕАЭС посредством построения экономико-математической модели, а также выявить эффективность единой промышленной политики.

В результате проведенного исследования представлены научные результаты, из числа которых с точки зрения **научной новизны** можно выделить следующие:

- Страны-члены интеграционной группировки были классифицированы по группам, которые в процессах регионального разделения и специализации труда влияют на повышение эффективности производства и экономический рост интеграционной группировки, исходя из своих природно-географических особенностей и ресурсообеспеченности.
- На основе обобщения показателей, оценивающих уровень специализации отдельных стран в процессах международного разделения труда, применяемых в международной экономике, разработан коэффициент отраслевого регионального разделения труда, позволяющий оценить участие стран-членов интеграционной группировки в региональном разделении труда.
- Посредством корреляционного регрессионного анализа построен график диверсификации/специализации экспорта стран ЕАЭС и дисперсии зависимости ВВП на душу населения, которая позволила выявить, что если для всех стран ЕАЭС предпочтительнее углубление специализации, то Армения с точки зрения роста ВВП на душу населения нуждается в принятии политики диверсификации экспорта.
- С помощью использования модели var-Vector AutoRegression был проведен анализ потрясений объемов промышленности стран ЕАЭС, позволивший выявить следующую закономерность: если раньше для удовлетворения внутреннего спроса РА увеличивала импорт промышленной продукции из РФ, то сейчас эта продукция производится в рамках национальной экономики, что негативно сказывается на росте объемов промышленности РФ, следовательно и ЕАЭС.

VRAM VLADIMIR KARAPETYAN

ISSUES OF REGIONAL DIVISION OF LABOR WITHIN THE FRAMEWORK OF COOPERATION OF THE EURASIAN ECONOMIC UNION

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty 08.00.06 - «International Economics».

The defense of the thesis will take place at 14^{00} , on 10th of November 2022, at 014 Council of the Econimies SCC RA at Armenian State Economic University. Adress: 128 Nalbandyan Str., 0025 Yerevan, Armenia.

ABSTRACT

The development of integration processes in the Eurasian region aims at providing a synergistic effect, which should be based on a more systematic use of the competitive advantages of the countries of the integration group and the formation of regional value chains that will ensure long-term economic growth through the use of a cross-like labor and capital.

The study of the regional division of labor, the most important factor in ensuring the economic growth of the EAEU countries, as well as the principles and patterns of regional industrial cooperation, needs a more systematic approach. The study is valuable in terms of the fact that the results obtained can be used to develop industrial policy for the EAEU countries.

In accordance with this goal, within the framework of the thesis the following objectives were set and met:

- identify and describe the conditions within which the process of regional division of labor is taking place and which affect the economic growth of countries,
- study the theoretical concepts of realization of the privileges of regional division and specialization of labor within the framework of various integration associations,
- identify practical problems of the regional division of labor and, based on the analysis of the concentration/diversification indices of exports and imports of the EAEU member states, identify areas of production specialization and opportunities for industrial cooperation of these countries,
- on the basis of studying the qualitative and quantitative characteristics of foreign trade flows of the EAEU member states, identify their impact on the economic and industrial development of the integration group,
- assess the possibilities of production cooperation and the formation of regional value chains between the EAEU countries by building an economic and

mathematical model, as well as identify the effectiveness of a unified industrial policy.

The object of the study is the process of the regional division of labor of the EAEU countries and its impact on the economic growth of countries, and the subject is the causal relationships of the regional division of labor and industrial cooperation between countries in terms of increasing the rates of economic growth of the member countries of the integration group.

In terms of scientific novelty, the study presents the following scientific results:

- The integration group member countries were classified into groups that, in the processes of regional division and specialization of labor, affect the increase in production efficiency and economic growth of the integration group, based on their natural and geographical characteristics and resource availability.
- On the basis of the generalization of indicators assessing the level of specialization of individual countries in the processes of the international division of labor used in the international economy, the coefficient of the sectoral regional division of labor has been developed, which makes it possible to assess the participation of member countries of the integration group in the regional division of labor.
- Through the correlation regression analysis, a graph of diversification/specialization of exports of the EAEU countries and the dispersion of the dependence of GDP per capita was built, which made it possible to reveal that if deepening specialization is preferable for all EAEU countries, then Armenia, in terms of GDP per capita growth, needs to adopt an export diversification policy.
- Using the Vector AutoRegression (VAR) model, an analysis of the shocks in the industrial volumes of the EAEU countries was carried out, which made it possible to identify the following pattern: if earlier the Republic of Armenia increased imports of industrial products from the Russian Federation to meet domestic demand, now these products are produced within the framework of the national economy, which negatively affects the growth of industrial volumes in the Russian Federation, and therefore the EAEU.